

Շատ բոյսեր ներքնապէս կապակցութիւն ունին կրօնական աւանդութեանց հետ, ինչպէս vervain կամ verbena ըստածը որ ժողովրդական լեզուով ճանչցուած է նուիրական խոս: Կ'ենթադրուի թէ այս տունկը Գեթսեմանիի պարտէզին մէջ կը ծլի, արտաշնչութեան այն արեան կաթիլներէն որ մեր Տիրոջ ճակատէն կը վազէին: Այս խոտը հոչակաւոր է իր առողջապահական հրաշալի յատկութիւններով, և սովորութիւն է հաւաքել զանոնք մասնաւոր յարգանքներով:

«Ողջոյն քեզ, ով նուիրական խոտ,

Որ կ'աճիս Ձիթենեաց լերան հողին վրայ,

Ուր առաջին անգամ դու հաստատուած էիր.

Շատ հիւանդութիւններու համար դու լաւ ես,

Եւ առողջարար շատ մը վէրքերու,

Քաղցրիկ Յիսուսի անունով՝ հովէն քեզի վեր կը վերցնեմ(*)» (L. V. C. էջ 271 - 272):

Քրիստոսի ըմբռնման տեղւոյն մասին կայ ուրիշ աւանդութիւն մըն ալ, որուն համաձայն՝ երբ Յիսուս ըմբռնուեցաւ, այնքան երեսն ի վար բռնութեամբ

(*) Այս նուիրական խոտէն վեց կուգայ երեքերեւեան առուոյսը որ Ա. Երրորդութեան խորհրդանշանն է, եւ ոսկեայ հինգ սերեւներով ծաղիկներ՝ որ կը խորհրդանշեն Քրիստոսի հինգ վերքեր: Ասկէց զաս, կայ բուսաբանական ամբողջ ցուցակ մը, եւ կը հասկըցուի թէ Քրիստոսի ծննդեան գրեթէ կը ծաղկին Բեթղեմէմի ասղանեաններ եւ թէ ձիւնածաղիկներ կը բացուին, երբ մեր Փրկիչը Տանար կը տարուի, եւ այնուհետեւ այն ծաղիկները մասնաւորապէս Տեառնընդառաջի սօնին եկեղեցւոյ զարդարանքի համար կը գործածուին:

Ա. Յովհաննու խոսին վրայ գտնուած կարմիր պիսակներ՝ կ'ըսեն թէ կ'երեւան Գլխասման տարեղարձին, եւ քաղցրաբեր (arum persicaria) միեւնոյն պիսակներ կ'ունենայ, վասնզի խաչին ստորս կ'անի ան (L. V. C. էջ 271 - 272):